ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 19—21 օրերին Մայր Աթոռում կայացավ ներքին թեմերի խորհրդակցական ժողով, որին մասնակցում էին՝

1. **Մայր Աթոռից.** Մայր Աթոռի միաբանական կազմը՝ գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի, Գերագույն հոգևոր խորհուրդը, Վերստուգիչ հանձնաժողովը և Մայր Աթոռի դիվանապետը, ֆինանսական և տնտեսական բաժինների վարիչները:

2. **Արարատյան թեմից.** առաջնորդական փոխանորդ գեր. տ. Վահան եպս. Տերյանը, թեմական խորհրդի անդամներ Պողոս Պողոսյանը, Խաչիկ Գուլուպաշյանը, Վարուժան Գոնչեգուլյանը (հաշվապահ):

3. **Շիրակի թեմից.** թեմակալ առաջնորդ գեր. տ. Մաշտոց եպս. Թաջիրյանը, արժ. տ. Վազգեն քհն. Ղարագյոզյանը (Կիրովական), Հովսեփ Ալեքսանյանը, Մովսես Այնթապյանը (հաշվապահ):

4 **Վրահայոց թեմից.** թեմակալ առաջնորդ գեր. տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, թեմական խորհրդի անդամներ Ալեքսանդր Հովսեփյանը (նախագահ), Սուրեն Ենայանը, Խաչիկ Հեքեքյանը, Գևորգ Դուրգարյանը (հաշվապահ):

5. **Ադրբեջանի հայոց թեմից.** թեմակալ առաջնորդ գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, թեմական խորհրդի նախագահ Աբգար Միրզոյանը, Նիկողոս Աթաջանյանը (հաշվապահ):

6. **Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի թեմից.** թեմակալ առաջնորդ գեր. տ. Պարգև եպս. Գևորգյանը, եկեղեցական խորհրդի անդամ Գևորգ Գևորգյանը (Մոսկվա), Սարգիս Մելքոնյանը (Օրջոնիկիձե):

7. **Գեղարդի վանքից.** վանահայր հոգ. տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը, Արա Բաստրըմաջյանը (տնտեսվար):

Մարտի 19-ին՝ երեքշաբթի օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Վեհարանում ընդունել պատգամավորներին՝ թեմական առաջնորդների գլխավորությամբ՝ ըստ թեմերի:

Ժամը 11.30-ից մինչև ժամը 15-ը Մայր Աթոռի դիվանատանը տեղի ունեցավ 1967 տնտեսական տարվա թեմերի բյուջեի կատարողականի հաշվետվության քննությունը և 1968 տարվա նախահաշիվների քննարկումը:

Ժամը 15-ին հյուրերը ճաշեցին Մայր Աթոռի միաբանական սեղանատանը:

Երեկոյան ժամը 19.30-ին պատգամավորները Երևանում, Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում, դիտեցին ներկայացում:

Մարտի 20-ին՝ չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 8.30-ին, Մայր տաճարում հանդիսավոր կերպով կատարվեց «Արևվագալ»-ի ժամերգությունը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ: Ժամերգությանը ներկա էին բոլոր պատգամավորները:

Արարողության ավարտին Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը հանուն Վեհափառ Հայրապետի ողջունեց թեմակալ առաջնորդներին և պատգամավորությանը և խոսեց գեղեցիկ քարոզ՝ «Սիրեցի զվայելչութիւն տան քո և զտեղի հարկի փառաց սրբութեան քո» բնաբանով և մաղթեց, որպեսզի պայծառ մնան ինչպես ս. Էջմիածինը, այնպես էլ թեմերի բոլոր եկեղեցիները:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Վեհարանի մուտքի առջև նկարվել պատգամավորների հետ:

Ժամը 11.30-ից մինչև 14.30-ը Վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նա-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ (1968 Թ. ՄԱՐՏԻ 21)

խագաճությամբ, գումարվեց խորհրդակցական ժողով: Ելույթ ունեցան թեմական առաջնորդներն ու պատգամավորներից շատերը:

Խորհրդակցության վերջում Վեհափառ Հայրապետը տվեց Իր պատգամն ու օրհնությունը:

Ժամը 15.30-ին Վեհարանի սեղանատանը տրվեց ճաշկերույթ՝ ի պատիվ պատգամավորների:

Երեկոյան ժամը 19.30-ին հյուրերը Երևանում, Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, դիտեցին ներկայացում:

Մարտի 21-ին՝ հինգշաբթի, ժամը 10.30-ին, ներքին թեմերի պատգամավորությունը, ընկերակցությամբ Մայր Աթոռի միաբանության, ուխտի գնաց ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը Օշականում և Երևանում՝ Ապրիլյան եղեռնի 50-ամյակին նվիրված հուշարձանին:

Երեկոյան հյուրերը հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, մեկնեցին իրենց թեմերը: